ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» կոթողային աշխատությունը հայ ժողովրդի պատմության մի ժամանակահատվածի՝ անցյալ դարի 50—60-ականների խիստ բարդ ու հակասական հարցերի ու խնդիրների յուրատեսակ հայելին ու արձագանքն է։ Հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների հասարակական միտքը հուզող բազմաթիվ հարցեր իրենց ինքնատիպ արտացոլումն ու լուծումն են գրտել այդ աշխատության մանավանդ առաջին հատորում։ Աշխատությունը կարծես թե բանալի է տվյալ ժամանակաշրջանի ցանկացած խնդրի վերծանման ու բացահայտման համար։ Այդ մեկնակետից էլ ես մոտեցել եմ նշված աշխատությանը՝ արևմտահայ կյանքի, սահմանադրական շարժման, նրա կողմնակիցների և հակառակորդների, այդ ժամանակի նշանավոր գործիչներ Մկրտիչ Խրիմյանի և Գարեգին Սրվանձտյանցի կյանքի ու գործունեության շառավիղները պարզաբանելիս։ Այս հոդվածում խիստ սեղմ և համառոտակի կաշխատեմ անդրադառնալ Աշոտ Հովհաննիսյանի հարցադրումներին, որոնք վերաբերում են Միքայել Նալբանդյանի դիրքորոշմանն արևմտահայ սահմանադրական շարժմանը, ազգային-ազատագրական պայքարին, ապա նրա գործն այլ պայմաններում և այլ ժամանակներում ինքնատիպ շարունակողներին՝ Մկրտիչ Խրիմյանին և Գարեգին Սրվանձտյանցին, նրանց տված՝ Աշոտ Հովհաննիսյանի գնահատականին։

Իր արտասահմանյան ուղևորությունները ձեռնարկելիս, Միքայել Նալբանդյանը երկու անգամ եղավ Կ. Պոլսում։ Առաջին անգամ Կ. Պոլիս մեկնելուց առաջ 1860 թ. օգոստոսի կեսերին նա եղավ Երևանում, ապա Էջմիածնում, կաթողիկոս Զուխաճյանից հնդկահայ վաճառականների կտակների գործը սանձնելու արտոնություն ստանալու համար։ Հենց դրանից հետո Թիֆլիսում Նալբանդյանը հանդիպումներ ունեցավ իր վաղեմի թշնամու՝ Սարգիս Ջալալյանի հակառակորդ մտավորականների հետ, և այդտեղ էլ նոր ուժով բորբոքվեց Նալբանդյան—Ջալալյան պայքարը։ Մեր խնդրից դուրս է անդրադառնալ այդ պայքարի մանրամասներին. նկատենք միայն, որ, ինչպես միշտ, Նալբանդյանը հաղթանակով է դուրս գալիս այդ պայքարից։ Կաթողիկոսից ստանում է օրհնության կոնդակ, որը, անշուշտ, ղսպել էր նրա թշնամիներին։ Կարճ ժամանակ անց՝ 1860 թ. նոյեմբերի 20-ին Նալբանդյանը Կ. Պոլսում էր։ Դրանից 10 օր առաջ, 1860 թ. նոյեմբերի 10-ին Մկրտիչ Խրիմյանը Գարեգին Սրվանձտյանցի, Երեմիա Տեկանցի և Հրաչյա Սևիկյանի հետ Վանից Պարսկաստանի վրայով ուղևորվում է Անդրկովկաս՝ ծանոթանալու արևելահայ մշակութային կենտրոններին, հասարակական գործիչներին և իր «ժառանգավորացի» համար հանգանակություն կատարելու նպատակով։ Երևանում նրանց սպասում էր ջերմ ընդունելություն։ Տեղի մտավորականները մի ամիս առաջ պատիվ էին

ունեցել հյուրընկալելու ռուսահայ հրապարակախոսին, և նրանցից մեկը խանդավառ տողեր էր հանձնել թղթին «հսկա, բարձր հասակով, սև հոնքերով, մեծ խաժակ աչքերով, առնական դեմքով»[1] Նալբանդյանի մասին։ Ահա նույն այդ մարդիկ ջերմորեն ընդունում են Խրիմյանին, որի մասին մինչ այդ Մելիքզաղեն հոդված էր տպել նույն Նալբանդյանի աշխատակցած «Հյուսիսափայլում»[2]։ Սրանցի մտավորականը Նահապետ Աթանասյանն էր՝ Խաչատուր Աբովյանի նախկին աշակերտը, որ արդեն մեկ ամիս անց այնքան է մտերմանում Խրիմյանի և Սրվանձտյանցի հետ, որ նրանց հետ ուղևորվում է Արևմտյան Հայաստան, դառնում «Ժառանգավորացի» աշակերտներից մեկը, ապա «Արծվիկում» հանդես դալիս հրապարակախոսական հոդվածներով։

Էջմիածնում կաթողիկոսից կոնդակ վերցնելով՝ Խրիմյանն սկսում է իր շրջագայություններն արևելահայ մշակութային կենտրոններում։ Առանձնապես բուռն ընդունելության է արժանանում Խրիմյանը Թիֆլիսում։ Տեղի եկեղեցիներում նրա քարոզների ժամանակ հավաքվում էր հսկա բազմություն։ Դա բացատրվում էր նրա քարոզների բովանդակությամբ։ Այդ տարօրինակ վարդապետը, մի կողմ դրած հայսմավուրքն ու ավետարանը, շանթեր էր արձակում ժողովրդի ցեցերի՝ վաշխառուների և նույնիսկ իրենց հոգևոր պաշտոնը չարաշահած հոգևորականների վրա։ Այդ շանթերից բաժին հասան նաև Իմերեթիայի թեմի հոգևոր առաջնորդ Սարդիս Ջալալյանին։ Սկսվեց քսությունների և նենգությունների մի մեծ արշավանք, ընդհատվեց Խրիմյանի շրջագայությունը Թիֆլիսում, ցուցակագրված հանգանակությունների գումարը դեռևս չհավաքված «Արծիվը... ձեռնունայն ու թևաթափ վերադարձավ Երևան», իսկ Էջմիածնում նրանից հետ վերցրին կաթողիկոսի կոնդակը, Խրիմյանի ճանապարհորդությունն ընդհատվեց։ Փաստորեն Ջալալյան-Խրիմյան պայքարն ավարտվեց առաջինի հաղթությամբ, չնայած բարոյական հաղթանակը Խրիմյանի կողմն էր։ Ինչպես տեսնում ենք, տարբեր են գործիչները. ռուսական կայսրության կենտրոնում հրատարակվող պարբերականի՝ «Հյուսիսափայլի» գլխավոր աշխատակիցը և Արևմտյան Հայաստանի տարածքում առաջին պարբերականի խմբագիրն ու գլխավոր աշխատակիցը։ Սակայն նույն ուղղությամբ էին տեղում նրանց մղած պայքարի շանթերը՝ Սարդիս Ջալալյանի և նրա արբանյակների դեմ, որոնք Խրիմյանի դիպուկ խոսքերով՝ ոչ թե հոգևորական էին, այլ «աղ անհամեալք» և վաղուց էին հեռացել իրենց քրիստոնեական գործելակերպից։

Նույն այդ ժամանակ Նալբանդյանը Կ. Պոլսում ծավալել էր իրեն հատուկ կրքոտ և բուռն պայքար։ Նա գիտակցում էր Կ. Պոլսի դերը արևմտահայ մշակութային ու հասարակական կյանքում, ուր այդ ժամանակ սուր պայքար էր ընթանում ադգային սահմանադրության ընդունման համար։ Պայքարն ընթանում էր մի կողմից՝ թուրքական կառավարության և նրան հարած ամիրայական վաշխառուական վերնախավի, մյուս կողմից, Ֆրանսիայում կրթություն ստացած լուսավորյալ մտավորականների և նրանց հարած արհեստավորական խավերի և գավառից պանդխտած հոծ հայության ներկայացուցիչների միջև։ Թեև ժամանակակիցների բնորոշմամբ՝ պայքարող այդ կողմերն ստացան «լու-

[1] Ալ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Ե., 1955, էջ 333։

[2] Հյուսիսափայլ, 1860, № 11, էջ 407—408։

սավորյալք և խավարյալք»[3] անվանումը, բայց պայքարի հիմքում ընկած էր տնտեսական գործոնը։ Նալբանդյանը միանգամից հայտնվեց այդ պայքարի հորձանուտում։ Չնայած այն հանգամանքին, որ 1860 թ. մայիսի 24-ին հայոց Ազգային ժողովը Կ. Պոլսում ընդունել էր սահմանադրությունը, սակայն օսմանյան մայրաքաղաքը շարունակում էր մնալ արևմտահայերի ազգային ինքնորոշման համար պայքարող ուժերի կարևոր հանգրվաններից մեկը։ Աշոտ Հովհաննիսյանի բնութագրությամբ, Կ. Պոլսում Նալբանդյանը «խիստ կարիք էր զգում ազատ և անշպար խոսք ասելու իր ժողովրդին, համախմբելու նրա ազատագրման համար պայքարող ուժերին, պարզելու նրանց անելիքը, մշակելու նրանց գործողությունների համար հատուկ հրահանգներ ու ծրագրեր»[4]։

Կ. Պոլսում Նալբանդյանն ուներ իր համակիրների մի բույլ, որոնք վաղօրոք ծանոթ էին նրա գրվածքներին Սվաճյանի «Մեղվում» և Ստ. Ոսկանի «Արևմուտքում» «Հյուսիսափայլից» արտատպած հոդվածներից։ Նալբանդյանի՝ Կ. Պոլիս ժամանելու պահին ժողովրդական զանգվածների ճնշման տակ ազգային գործերի տնօրինությունը, խլվելով կղերաամիրայական վերնախավի ձեռքից, անցնում է արհեստավորների ձեռքը։ Քիչ ժամանակ անց այդ շրջադարձին հաջորդեց հակասահմանադրական ռեակցիան։ Վախեցած ժողովրդական շարժումներից՝ սահմանադրության հեղինակները դաշն կնքեցին հակասահմանադրականների հետ, և ազգային սահմանադրությունը հանձնվեց Բ. Դռան վերաքննությանը։ Արդյունքում ստացվեց, Նալբանդյանի բնորոշմամբ, «թլփատված» սահմանադրությունը։ Ռուսահայ հրապարակախոսը հայտնվեց սահմանադրականների և նրանց հակառակորդների միջև մղվող պայքարի կիզակետում և իր սլաքներն ուղղեց սահմանադրության բացահայտ թշնամիների՝ Զամուռճյան-Տերոյենց պատվելիի և նրա արբանյակների դեմ, որոնք ազգային սահմանադրությունը մատնում էին թուրքական իշխանություններին, բնութագրելով այն որպես «պետություն պետության մեջ»։ Սվաճյանի «Մեղվում» լույս տեսան Մ. Նալբանդյանի «Կ. Պոլսի լուսավորչական համայնքը», «Ազգային թշվառությունը» և հատվածներ «Երկու տող» պամֆլետից։ Այդ հոդվածները Մ. Նալբանդյանի մղած պայքարի արտացոլումն էին։ Առանձնապես ուժգին էին «Ազգային թշվառություն» հոդվածը և «Երկու տող» պամֆլետը, ուր ռուսահայ հրապարակախոսը հայ հոգևորականների դեմ Ռուսաստանում մղած սուր պայքարը տեղափոխում էր Կ. Պոլիս, մերկացնելով նրանց արևմտահայ գործիչներին, Կ. Պոլսի և արևմտահայ գավառի ազգային ջոջերին՝ Պողոս Մելիքյանին, Հովհաննես Զամուռճյանին և այլոց։ Մ. Նալբանդյանը հարձակվում էր Կ. Պոլսի Ազգային և կրոնական ժողովների վրա, որոնք կիսատ-պռատ որոշումներով պաշտպանում էին Վանի հոգևոր առաջնորդ, վարդապետ, ապա եպիսկոպոս Պողոս Մելիքյանին։ Ազգային սահմանադրության իրավական նորմերի գործադրման տեսանկյունից Նալբանդյանը պահանջում էր Պողոսին դատապարտել իր գործած չարիքների համար ոչ թե կրոնական ժողովի կիսատ-պռատ որոշումներով, այլ պետության պատժական մարմինների միջոցով՝ իբրև քրեական հանցագործի։ Գավառահայ ռեակցիոն կղերը սարսափում էր սահմանադրական վարչական բարեփոխումներից։ Նրանք իրենց ղեկավար Պողոսի հետ դաշն են կնքում հայ չորպաճիների, քուրդ շեյխերի և դե-

[3] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4177, էջ 40։

[4] Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 330։

բերելիների հետ։ Անդիջում Նալբանդյանը կտրուկ ներկայացնում է իր հավատամքը. «Չի կարելի իրավադատություն քարոզել և անիրավությունը պաշտպանել։ ...Չի կարելի ազատություն քարոզել և խղճմտանք բռնաբարել»[5]: Վերլուծելով Մ. Նալբանդյանի՝ Պոդոսի դեմ ուղղված պայքարի ընթացքը, Աշոտ Հովհաննիսյանը նշում է. «Պոդոսին մերկացնում էին Խրիմյանն ու նրա աշակերտները՝ Սրվանձտյանցը և ուրիշներ, արտահայտելով տեղական առևտրի և ապրանքայնացող գյուղատնտեսության պրոդրեսիվ մղումները»[6]: Չնայած «պրոդրեսիվ» պիտակին, համենայնդեպս, այստեղ Խրիմյանը և Սրվանձտյանցը ներկայացվում են իբրև գավառական նոր զարգացող բուրժուազիայի ներկայացուցիչներ։ Այս դնահատականի հետ համաձայնել չենք կարող։ Նրանք երկուսն էլ՝ և՛ ուսուցիչը, և՛ աշակերտն արտահայտում էին ամենալայն դեմոկրատիայի՝ շրջավոր գյուղացիության և արհեստավորության շահերը և այդ դիրքերից էլ պայքարում էին և՛ բարձրաստիճան հոգևորականության, և՛ ամիրայության, և՛ սահմանադրության նախկին հեղինակների դեմ, որոնք աստիճանարար դաշն էին կնքում նրանց թշնամիների հետ։ Շարունակելով իր միտքը գավառահայ բուրժուազիայի մասին, Աշոտ Հովհաննիսյանը գրում է. «Գավառահայ բուրժուազիան ավելի մոտ էր կանգնած գյուղացիությանն ու արհեստավորությանը...։ Նրա առաջավոր ձայնատարները պայքարի մեջ էին ֆեոդալների և առևտրավաշխառուական ցեցերի հետ։ Նրա զաղափարախոսներից մեկը՝ Խրիմյանը, բանի դեռ չէր լքել գավառը և չէր կորցրել կապերը գավառի ժողովրդի հետ, քարոզում էր ժողովրդասիրական, հայրենասիրական իդեալներ, լուսավորում արտադրող մասսայի միտքը, խրախուսում արտադրության բարձր եղանակներ, շարժում գավառահայ բուրժուազիայի ազգային-քաղաքական մրափած եռանդն ու գիտակցությունը»[7]: Խրիմյանի գործունեության հետևողական ուսումնասիրությունը մեզ հանգեցրել է այլ կարծիքի։ Նա երբեք իր կապը չկտրեց հայ գավառներից։ Այդ հարցին թերևս լավագույնս կարելի է պատասխանել հայ եկեղեցու ականավոր պատմաբան և հմուտ տարեգիր Մաղաքիա Օրմանյանի՝ Խրիմյանի վերաբերյալ աջ դիրքերից արված քննագատությամբ. «Ինքն գավառի զավակ, գավառական կյանքի անձնանվեր, գավառի ժողովրդին վիճակով տոդորված և գավառացի տարրին բարվոքումը միայն իրեն նպատակ բրած, գավառեն զատ բան չխոսեցավ, գավառեն զատ բան չլսեց, բայց գրժրաիտաբար այդ նպատակին մեջ ալ արդյունավոր չեղավ»[8]: Բավական է հիշել պատրիարք Խրիմյանի օրոք կազմված «Գավառական հարստահարություններին» տեղեկագիրը և նրա քննարկումը սահմանադրական հորջորջված Ազգային ժողովի նիստերում, որպեսզի անվերապահորեն շեշտենք, թե պատրիարք Խրիմյանը կապը երբեք չկտրեց գավառից և նրա շահերի պաշտպանության համար էլ հրաժարական տվեց պատրիարքությունից։ Պատրիարք Խրիմյանի պայքարն ազգային սահմանադրության վերաքննության համար փաստորեն նպատակամղված էր գավառական՝ գյուղացիական և արհեստավորական խավերի շահերի պաշտպանությանը։ Խրիմյանի գործունեության բնութագիրը չի փոխվում նաև հետագա տարիներին։ Աշոտ Հովհաննիսյանի վերոհիշյալ միտքը ճիշտ է ընդհանրապես իբրև դնահատական բուրժուազիայի վերընթաց շարժմանը, երբ

---

5 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Ե., 1947, էջ 304։

6 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 374.

7 Նույն տեղում, էջ 358—359։

8 Մ. Օրմանյան, Ազգապատում, Երուսաղեմ, 1927, էջ 4255։

ֆեոդալիզմի կապանքներից ազատվելու համար նա դաշինք էր կնքում ժողովրդական զանգվածների հետ։ Բայց կոնկրետ տվյալ դեպքում Խրիմյանն ու Սրվանձտյանցը հանդես էին դալիս իբրև ժողովրդական զանգվածների, ոչ թե բուրժուազիայի ներկայացուցիչներ և շահերի արտահայտիչներ։

Սակայն հետ դառնանք նորից Նալբանդյանի պոլիսյան գործունեությանը։ «Ազգային թշվառություն» հոդվածում Նալբանդյանը պահանջում է եկեղեցու ռեֆորմ՝ համարյա բոլոր բնագավառներում. ռեֆորմ եկեղեցու տնտեսական կառավարման մեջ, եկեղեցականների՝ դեպի ազգն ունեցած հարաբերության մեջ, եկեղեցականների կրթության հարցում և այլն։ Սկզբից եկեղեցու ռեֆորմ պահանջելով վերից՝ այսինքն, կրոնական ժողովի կողմից, Նալբանդյանն դդուշացնում էր, որ հակառակ դեպքում ժողովրդական զանգվածները ոտքի կելնեն եկեղեցու դեմ։ Սակայն նույնիսկ այդ սուր հոդվածն ի զորու չեղավ օգնելու Կ. Պոլսի կրոնական ժողովին՝ Պողոս Մելիքյանին կարգալույծ անելու կամ պատժելու համար։ Դեռ դատը չավարտված, Պողոսը փախավ Վասպուրական և շարունակեց հոգևոր առաջնորդի իր պաշտոնը։ Անցավ 10 տարի։ Նոր պատրիարք Խրիմյանը 1870-ին սահմանադրության գործադրիչի պաշտոնով Վան է ուղարկում իր նախկին սանին ու զինակցին՝ Գարեգին Սրվանձտյանցին։ Այդ նշանակումն ինքնին հարցականի տակ էր դնում Պողոս Մելիքյանի՝ իբրև հոգևոր առաջնորդի լինելիությունը։ Վանում նոր ուժով բորբոքվում է պողոսյան-ապողոսյան պայքարը։ Ժամանակակիցներից մեկի դիպուկ բնութագրությամբ[9] ողջ արևմտահայ կյանքը, նույնիսկ Պոլիսը, անգամ թուրքական իշխանությունները բաժանվում էին երկու խմբի՝ պողոսյաններ և ապողոսյաններ, ըստ որում, սուլթանը նշվում էր իբրև Պողոսի կողմնակից։ Արխիվային նյութերը[10] հավաստում են, թե ինչ վճռական պայքար է մղել Պողոսի դեմ Սրվանձտյանցը։ Պատրիարք ուսուցչին ուղղած իր նամակներում մեկ առ մեկ թվարկելով Պողոսի հանցանքները (ինչպես ժամանակին անում էր Նալբանդյանը), ցույց տալով նրա կապը Վանի չորպահների՝ Մարությանի, Պանիրյանի, հայկական ծագում ունեցող թուրքացած Թեմուրղաղեների գերդաստանի հետ, Սրվանձտյանցը վճռականորեն պահանջում է Խրիմյանից Պողոսին հեռացնել Վանից՝ թեկուզ իշխանությունների միջոցով, դատել նրան որպես քրեական հանցագործի (այսինքն՝ այն, ինչ պահանջում էր Նալբանդյանը տասը տարի առաջ)։ Իրեն ձերբակալելու եկած զապթիեների մոտ Պողոսը բացականչում է. «Խիանաթ (դավաճան—Է. Կ.) Խրիմյան»,—ազգի մեջ եղած հակակառավարական խլրտումների հեղինակը համարելով հայոց պատրիարքին. «Զեյթունը ապստամբեցուց կառավարության դեմ»[11],—հայտարարությամբ Պողոսը հայոց պատրիարքին և նրա զինակիցներին մատնում է կառավարությանը։ Նույնիսկ Պողոսին աքսորելուց հետո, օգտագործելով Խրիմյանի հրաժարումը պատրիարքությունից, Պողոսի կողմնակիցները՝ Պոլսի և գավառի կղերամիրայական վերնախավը դանկանում էր առանց միջոցների մեջ խտրականություն դնելու վերականգնել նրա դիրքերը։ Սակայն դա չի հաջողվում։ Փաստորեն Նալբանդյանի մղած պայքարն ավարտին է հասցվում Խրիմյանի և Սրվանձտյանցի միջոցով։ Վերջինս, որ 70-ականների 2-րդ կեսից ոտքով շրջագայել էր Արևմտյան Հայաս-

[9] Ա. Թերզիպաշյան. Արծիվը իր բույնին մեջ, Փարիզ, 1938, էջ 188։

[10] Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ). Սրվանձտյանցի ֆ., 2-րդ ր., գ. 30, 32, 190, 191, 312, 466 և այլն

[11] Դիվան հայոց պատմության, հ. ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 444։

ունի համարյա ողջ տարածքը, կազմել բազմաթիվ վայրերի վիճակագրություն-ները, «Թորոս աղբար» աշխատության մեջ և պատրիարքարանին ուղղած իր հաշվետու զեկուցագրերում ներկայացնում էր իր կարգակից հոգևորականների շահամոլ և արծաթասեր ընթացքը և իր մեծ նախորդի նման դնում էր հայ եկեղեցու բարենորոգման պահանջը. «Ժամն է ազգն ալ մաքրե եկեղեցին ու ժողովուրդը իր ապականարար սրբազաններեն և հայ սրբերեն։ Ժամանակն է [illegible] ուխտագնական վիճակից հանել և քաղաքական քայլ առնել տալ»[12]: Ա-ղերսները Նալբանդյանի և Սրվանձտյանցի միջև ակներև են։ Միքայել Նալ-բանդյանի մղած ազատագրական պայքարի անմիջական շարունակությունը եղան Խրիմյանի «Ազգային երկպառակություն», «Ազգային կեդրոնական վար-չություն», «Հայրենյաց նոր հառաջադիմության համար մա՞րդ պետք է, թե Սահմանադրությո՞ւն» խորագրերով հոդվածները, որոնք լույս տեսան «Արծուի Վասպուրականում»[13]: Առավել սուր և հետևողական էր նրա երիտասարդ զի-նակից Գարեգին Սրվանձտյանցի՝ խոսքով և գործով մղած պայքարը։ Իր խմբ-ագրած «Արծվիկ Տարոնոյ» երկշաբաթաթերթի էջերում հրատարակված բազ-մաթիվ հոդվածներում նա ցույց է տալիս սահմանադրության պարգևած «շը-նորհները», այն, որ այդ օրենքը չի գործադրվում Կ. Պոլսում՝ նրա հեղինակ-ների աչքի առաջ, ուր մնաց գավառում. «Ի բաց առնունք զՏարոն և ուր արդյոք կտեսնանք գործ կամ կյանք սահմանագրության, որ գավառի հայը վայելեց նորա շնորհք. Թողունք գավառներ, Պոլիսն ինչ տեսավ տակավին. կկանգնի և կիյնա. կերեւկի և կրկին վիրավորված կպառկի. ազգը դեռ բարիք մը չտե-սավ»[14]: Այդ պայքարն առավել սուր կերպարանք ընդունեց, երբ Խրիմյանը նշանակվեց Տարոնի հոգևոր առաջնորդ, իսկ Ս. Կարապետ վանքի միաբան-ները, խոչընդոտելով Խրիմյանի սահմանադրական ճիգերին, համերաշխվելով մի շարք գյուղապետերի՝ ռեիսների հետ, Թուրքական իշխանության տեղա-կան մարմիններին մատնում էին հոգևոր առաջնորդի ժողովրդաշահ գործու-նեությունը, նրան մեղադրելով պետական դավաճանության մեջ։ Դավերն ու բռնությունները հասան այն աստիճանի, որ վանքի միաբանությունը վարձեց քուրդ ավազակի՝ Խրիմյանին սպանելու համար։ Երեք անգամ կրկնվեցին մա-հափորձերը, որից հետո Խրիմյանն իր համախոհներով մեկնեց Կ. Պոլիս՝ իր ժողովրդանվեր գործունեության համար «արդարանալու» Ազգային կեդրոնա-կան վարչության առաջ։

Նալբանդյանն այդ ժամանակ ազատազրկված էր Պետրոպավլովյան ամ-րոցում։ Նույնիսկ Ալեքսեևյան ռավելինում նա ուշի ուշով հետևում էր արևմ-տահայությանը հուզող խնդիրներին, արձագանքում իր բարեկամ ու զինակից Հարություն Սվաճյանի բոլոր հոդվածներին։ Իսկ Սվաճյանը, ինչպես վայել էր «Մեղվի» խմբագրին և Մեչուխեչյանին, իր հերթին անմիջականորեն արձագան-քում էր բուն Արևմտյան Հայաստանում կատարվող կարևոր իրադարձություն-ներին։ Նա հաճախ, առանց ինքնությունը հայտնելու, հոդվածներ էր արտա-տպում Գարեգին Սրվանձտյանցի «Արծվիկից», ուր խմբագիրը ներկայացնում էր Ազգային կեդրոնական վարչությանը, նկարագրում տարոնահայության թշվառ կացությունը[15]: 1864 թ. բանտում գտնվող Նալբանդյանը թույլտվություն ստա-

[12] ԳԱԹ, Բ. Ազատյանի ֆ., ր. 12, գ. 10525։

[13] Արծուի Վասպուրական, 1861, N 1, 2, 3, 5, 8։

[14] Արծվիկ Տարոնո, 1865, N 44։

[15] Ի դեպ, ուսումնասիրողներից Հ. Ղազարյանը այդ հոդվածները վերագրել է Սվաճյանին,

ցավ 3-րդ բաժանմունքի հսկողության ներքո հոդված տպել «Հյուսիսափայլում»։ Այդ հնարավորությունը Նալբանդյանն օգտագործեց գնահատելու «Մեղվի» և Սվաճյանի կատարած գործը, դրա հետ միասին բնութագրելու նաև Խրիմյանին և նրա խմբին. «Գավառների դրությունը նկարագրեց Մեղուն, Վասպուրականի թշվառությունը ստորագրեց Մեղուն, Տարոնի խռովությունը պատմեց Մեղուն, արժանապատիվ Մկրտիչ վարդապետին պաշտպանեց Մեղուն, նորա վերա գիշերային լռության մեջ հրացան գատարկողների ընդդեմ բողոքեց Մեղուն, գավառ չթողեց, գեղ չթողեց, ամեն ծակ ու ծուկ մտավ Մեղուն, թող մեռնի Մեղուն, թող վանեցի պողոսները փառավորվեն»[16]: Նույն 1864-ին Սրվանձտյանցը պայքարում է ոչ միայն Պողոսի, այլ նրանից բարձր աստիճանի վրա դտնվող հոգևորականի՝ Աղթամարա Խաչատուր կաթողիկոսի դեմ, որն իր նախորդի՝ Պետրոս Բյուլբյուլի սպանությամբ զավթեց կաթողիկոսական աթոռը և Պողոսից ավելի անհագ շահագործում էր տարոնահայությանը։ «Այս Խաչատուրն է, որ խեղճ ժողովուրդը այսպես կհարստահարե, կկեղեքե ու մորթաղերծ կրնե, նա է գավառին թանդիմաթը, թաշիրը և դամշուր առնողը, որով հարյուրապատիկ կնեղե զժողովուրդ...»[17]: Պատմելով Խաչատուրի բաղմաթիվ հանցանքների, հավաքած հարկերի և դրամաշորթության մասին, Սրվանձտյանցը մեծ համարձակությամբ Պոլսի Ազգային վարչությունից պահանջում է. «Ի պատիժ Վարչություն, ի պատիժ արկեք ձեր ձեռքերը, քննեցեք, բայց և պատժեցեք, մեր ազգի թե՛ եկեղեցական և թե՛ աշխարհական ստահակները շատ են»[18]: Սրբվանձտյանցը մեկ առ մեկ թվարկում է հայ եկեղեցականների կատարած չարագործությունները Վասպուրականում, Այրարատում, Երուսաղեմում և Կ. Պոլսում, ապա պահանջում է «Իսկ դու վարչություն... փութա ձգել քո ձեռն ըստ ձեռնհասության ի դատաստան, սրբել աղդը նենգավորներե և չարագործներե. այս է քո միակ մեծագործությունը»[19]: Ինչպես տեսնում ենք, Սրվանձտյանցի կրքոտ ոճը չի զիջում Նալբանդյանին։ Այնքան մեծ էր ռուսահայ հրապարակախոսի հմայքը, ուժը և ազդեցությունն արևմտահայ դեմոկրատների վրա, որ նրանք հաճախ վերջինի խոսքերն առանց փոփոխության, առանց հայտնելու հեղինակի ինքնությունը, գրաքննությունից խուսափելու համար, դրում էին իրենց թերթում, իրենց անունից։ Այդպես է վարվում և Սրվանձտյանցը, իր «Արծվիկի» էջերում զետեղելով Խ. Աբովյանի նախկին աշակերտ Նահապետ Աթանասյանի՝ առաջին հայացքից կրոնական թվացող հոդվածը, որի խորագիրն էր. «Արձանական դիմառնութիւն ի տապանէ սրբոյն Սահակայ Պարթևի հայրապետին»[20]: Այդ հոդվածում հեղինակը Սահակ Պարթևի անունից հայտարարում է. «Ծառը արմատովն է ծառ. տուն հիմամբ է տուն, հետևաբար ազգության լծակն ու հաստատանը է հասարակ ժողովուրդը. առանց ասոնց չկա ազգություն և ուր չկա ազգություն, հոն ի՞նչ մարդկություն»։ Նալբանդյանի այս

Սրվանձտյանցի հոդվածներով հաստատել Սվաճյանի հեղափոխական դեմոկրատ լինելը, իսկ Սրվանձտյանին դասել պահպանողականների շարքում (տե՛ս Հ. Ղազարյան. Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Ե., 1967, էջ 624)։

[16] Մ. Նալբանդյան, նշվ. աշխ., հ. 3, Ե., 1940, էջ 108։

[17] Արծվիկ Տարոնո, 1864, Բ շրջան, նոյեմբերի 15 (№ 30), էջ 23։

[18] Նույն տեղում, էջ 24։

[19] Նույն տեղում։

[20] Նույն տեղում, Ա շրջան, օդոստ. 15 (№ 24), էջ 94։

խոսքերի կրկնությունը ցույց է տալիս հոդվածի հեղինակի և խմբագրի հավատարմությունն այդ գրությունների։

Աշոտ Հովհաննիսյանի աշխատության մեջ հանգամանորեն վերլուծվում են Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության հեղինակման և լույս ընծայման շարժառիթները և նպատակները։ Գրելով տոդի փրկության խելացի հնարը հոդի և երկրագործության մեջ, Նալբանդյանը ոչ թե ետ էր նայում դեպի «նատուրալ-տնտեսական ռուսական իդիլիան»[21], այլ ազգային վաճառականության միջոցով տեղական բնական բերքերի և երկրագործության արդյունքների վաճառահանումը համարում էր երկրագործության զարգացման նպատակը։ Նալբանդյանն առաջ էր քաշում տոհմական բանկերի կամ հատուկ ընկերությունների ստեղծման գաղափարը, որոնք պետք է նպաստեին մանր գյուղացիական տնտեսություններին։ Նալբանդյանի աշխատության անմիջական արձագանքը եղավ Սվազյանի կողմից Մեղվում հրատարակված «Ով այսօր հող չունի, վաղը հաց չունի» հոդվածը[22], որն էլ իր հերթին ունեցավ այլ արձագանքներ։ Խրիմյանը և Սրվանձտյանցը խոսքով և գործով ձեռնամուխ եղան այդ գաղափարների՝ կյանքում իրականացմանը։ Վասպուրականում և Տարոնում վերջիններիս հովանավորությամբ և օգնությամբ ստեղծվում են բազմաթիվ ընկերություններ, որոնք իրենց կանոնադրությունները հրատարակում էին «Արծուի Վասպուրականի» և «Արծուիկ Տարոնոյի» էջերում։ Երկրագործության զարգացումը Սրվանձտյանցը համարում էր պանդխտություն կոչված չարիքին դիմակայելու ամենագործուն միջոցներից մեկը. «Պետք է հողեր գնել, պետք է տեղ տեղ փոքրիկ պանք հաստատել, որոնք գոնե հայը պանդխտության դիմելե ետ կկեցնի»[23]։ Գյուղատնտեսության հետ միասին Սրվանձտյանցը ցանկանում էր զարկ տալ արդյունաբերության զարգացմանը, որպեսզի հասարակ ժողովուրդը, ընչազուրկ դանդվածն աշխատանք և ապրուստ որոնելիս չլքի հայրենի եզերքը և չրոնի պանդխտության ուղին։

Գրավոր խոսքին հաջորդեց Սրվանձտյանցի պրակտիկ գործունեությունը։ 1865-ին նա գործուն մասնակցություն է ցույց տալիս Ակնում Միսաք Թիմուրյանի կողմից կազմված «Նահապետական» ընկերության գործունեությանը։ Իբրև այդ ընկերության վստահված անձ, Սրվանձտյանցը տնօրինում է նրանց զումարները։ Նրան հաջողվում է ընկերության համար գնել Մշո դաշտի անմարդաբնակ Շքավդիան գյուղը և հիմնադրել «Նոր Հայ» գյուղը։ Միսաք Թիմուրյանը լույս է ընծայում ընկերության կանոնադրությունը և արտահայտում իր հայացքները այդ ընկերության գործունեության մասին։ «Թորոս աղբարի» առաջին հատորում վերլուծելով ընկերության գործելակերպը, Սրվանձտյանցն ընդարձակ հատվածներով մեջբերում կատարելով, համերաշխվում է այդ հայացքների հետ։ Թիմուրյանն ու Սրվանձտյանցը ցանկանում էին «Նոր Հայ» գյուղ դաղթեցնել Ակնա «խեղճերին» և այլ վայրերի աղքատ մարդկանց և վարեին «օրինավոր տնտեսություն»։ Գյուղը վարելու էր չորս հոգուց բաղկացած տեսչական ժողովը։ Աշխատանքի արդյունքը պետք է բաշխվեր այնպես, որ բավարարեր տարվա ապրուստը, իսկ մնացորդն ուղարկվելու էր վաճառքի՝ է-

---

21 Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 519։

22 Մեղու, 1862, հունիս։

23 Դ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, հ. 1, Կ. Պոլիս, 1879, էջ 269։

ժան և մատչելի գներով։ Այդ հանգամանքը հատուկ ընդգծվում էր։ Ընկերության անդամներն իրար դիմում են ընկեր որբաբարյան դեղեցիկ բառով...[24]։

Որոշ ժամանակ նախապատրաստական աշխատանքներ կատարելուց հետո ակնեցիները տեղափոխվեցին «Նոր հայ» գյուղը, սակայն, Սրվանձտյանցի խոսքերով, «երկրի ու քաղաքականության դժվարությանց պատճառով», Խիմությանը չկարողացավ «նահապետական» ընկերությունը դնել բաղձալի վիճակի մեջ։ Արևմտյան Հայաստանում այդ փաստը եզակի չէ։ Նման նպատակով գործունեություն են ծավալում բոուսահայերը և խնդրում Խրիմյանի օժանդակությունը[25]։ Առավել ցայտունն Էրզրումի մի խումբ հայրենասերների փորձն էր՝ «երկրագործական տիպար ագարակ» հիմնելու և երկրագործությանը դարձ տալու համար։ Ընկերության անդամները գործուն նամակագրություն սկսեցին Մ. Խրիմյանի հետ[26], նրա խորհուրդն ու օգնությունն ստանալու նպատակով։ Սակայն թուրքական կառավարությունը կտրականապես արգելեց դնված հողային տարածքը հայերի վրա թափու անելուն։ Երկրագործական այդ ընկերության անհաջողությունից հետո հենց նրա հիմնադիր անդամներն ստեղծեցին «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը։ Կարող ենք նկատել, որ այդ ընկերությունները եղան ազատագրական նպատակներ հետապնդող կազմակերպությունների նախադուռը։

Այսպես կարելի է շարունակել փաստերը։ Սակայն բերվածն էլ բավարար էր ապացուցելու, որ Խրիմյանն ու Սրվանձտյանը արևմտահայ դեմոկրատների առաջին շարքերում էին։ Փաստորեն Աշ. Հովհաննիսյանի աշխատության, արխիվային փաստաթղթերի և հասանելի մատենագիտական արժեք ներկայացնող մամուլի փաստերի համադրությամբ փորձ ենք կատարում վերանայել մեծ գիտնականի բնութագրումները Մկրտիչ Խրիմյանի և Գարեգին Սրվանձտյանցի վերաբերյալ։

АШОТ ИОАННИСЯН И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИЗУЧЕНИЯ ИСТОРИИ ЗАПАДНЫХ АРМЯН

Э. Л. КОСТАНДЯН

Резюме

Монументальный труд выдающегося историка Ашота Иоаннисяна «Налбандян и его время»—своеобразное эхо и зеркало сложных и противоречивых вопросов и задач в истории армянского народа 50—60-х гг. прошлого века. Оценивая борьбу Хримяна и его соратников против реакционных деятелей Погоса Меликяна и Ованеса Чамурджяна, Иоаннисян причисляет первых к представителям провинциальной буржуазии, с чем мы не можем согласиться.

Архивные документы и материалы периодики свидетельствуют о том, что Хримян и Срвандзтянц являются представителями широкой демократии.

[24] Ի տարբերություն մերօրյա քաղաքական այրերի, որոնք այդ բառին տալիս են սոսկ բոլշևիկյան պատկանելություն։

[25] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., 2-րդ բ., գ. 315, 437։

[26] Տ. Մ. Նշկան, Առաջին կայծեր, 1930, էջ 110։